ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.1, Հեռ. 060656505 , info@mecamor.am

N **04155**
09 սեպտեմբեր 2024թ.

«ՏՈՒՐԻՍՏԱՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԹԱԳՈՒՀԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Մելքոնյան

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար՝ 2022 թվականի հոկտեմբերի 18-ին հայտարարված Մեծամոր համայնքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/67 ծածկագրով, գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «ՏՈՒՐԻՍՏԱՍ» ՍՊԸ-ն և 2022 թվականի դեկտեմբերի 30-ին Ձեզ հետ կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/67-1 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 13.03.2023թ-ին և 16.10.2023թ-ին կնքվել է ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցերի հաստատման Համաձայնագրեր:

2024 թվականի փետրվարի 7-ին, 14-ին, 21-ին, 26-ին Մեծամորի համայնքապետարանի կողմից պարբերաբար կատարվել են այցեր Մեծամոր համայնքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման ընթացքը ուսումնասիրելու համար և պարզ է դարձել, որ շինարարարկան հրապարակում աշխատակիցների քանակը կտրուկ նվազել է և շինարարական աշխատանքներում առաջընթաց չի գրանցվում:

2024 թվականի փետրվարի 28-ի գրությամբ՝ Ձեզ տեղեկացվել է կատարված այցերի և դիտարկումների մասին, ինչպես նաև նշվել է, որ անհրաժեշտ է մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտնել շինհրապարակում մասնագետների բացակայության պատճառը և աշխատանքների պատշաճ կատարման ժամկետը:

2024 թվականի փետրվարի 29-ին Ձեր կողմից ստացվել է գրություն, որտեղ նշված է, որ «...աշխատանքները կվերսկսվեն նախկին տեմպով և շին հրապարակում մշտապես ներկա կգտնվեն մասնագետները և աշխաանքները կավարտվեն նախատեսված ժամանակին:»

2024 թվականի ապրիլի 22-ին Ձեր կողմից ստացվել է ժամկետի երկարաձգման գրություն, որում նշվում է, որ երկարաձգման անհրաժեշտություն է առաջացել ի հայտ եկած լրացուցիչ աշխատանքների և տեխնիկական խնդիրների պատճառով:

2024 թվականի ապրիլի 30-ին, Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունած որոշումը, «Տուրիստաս» ՍՊԸ-ին ծանուցվել է ժամկետի երկարացման համաձայնագիր, և աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել սույն թվականի նոյեմբերի 1-ը, սակայն սահմանված ժամկետում չի ներկայացվել Ձեր կողմից հաստատված բնօրինակները:

2024 թվականի հունիսի 10-ին Մեծամերի համայնքապետարանի կողմից գրությամբ Ձեզ տեղեկացրել են այն մասին, որ «...Սույն թվականի հունիս ամսին կատարվել են նմանատիպ շրջայցեր, որոնց ընթացքում նկատվել է «Տուրիստաս» ՍՊԸ-ի կողմից իրականացվող աշխատանքների դանդաղում, իսկ վերջին մեկ շաբաթվա ընթացքում նաև շինհրապարակում աշխատող մասնագետների բացակայումը, որի արդյունքում նկատելի է դարձել աշխատանքների առաջընթացի բացակայություն:

Վերոնշյալ փաստերը Մեծամորի համայնքապետարանում մտահոգություն են առաջացրել առ այն, որ հնարավոր է «Տուրիստաս» ՍՊ ընկերության կողմից Պայմանագրով ստանձած պարտավորությունների սահմանված ժամկետում չկատարելու վեարբերյալ, ուստի պահանջում ենք **մեկ աշխատանքային օրվա** ընթացքում Մեծամորի համայնքապետարանին գրավոր հայտնել շինհրապարակում մասնագետների բացակայության պատճառը և աշխատանքները վերսկսման ժամկետը»:

Ձեր կողմից նշված ժամկետում որևէ արձագանք չի եղել: 2024 թվականի հունիսի 14-ին կրկին Մեծամորի համայնքապետարանի կողմից ներկայացվել է գրություն և գրությամբ նշվել է, որ «Հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացման արդյունքում համայնքապետարանի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության համապատասխան աշխատակիցների կողմից արձանագրվել են թերություններ, մասնավորապես տեղադրված են իրարից տարբերվող եզրաքարեր, առկա են կոտրված եզրաքարեր և գունային անհամապատասխանություններ, ինչպես նաև առկա են ամրացված սալիկների մակերեսային անհարթություններ: Անհրաժեշտ է Ձեր կողմից միջոցներ ձեռնարկել արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ և սահմանված ժամկետում տեղեկատվություն տրամադրել ձեռնարկված գործողությունների և դրանց արդյունքների վերաբերյալ:

Ժամեկտը՝ 20.06.2024 թ.»

2024 թվականի հունիսի 17-ին Ձեր կողմից ստացվել է գրություն, որում նշվում է, որ «... աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկվում են, մասնավորապես՝ փոխվում են եզրաքարերը, իսկ սալիկները հարթեցվելուց հետո նորից կվերատեղադրվեն: «Տուրիստաս» ՍՊԸ-ն հայտնում է, որ շտկումը կկատարվի մինչև 30.06.2024թ.ը:»

Նշյալով պայմանավորված, Մեծամորի համայնքապետարանը, նկատելով կատարված աշխատանքի արդյունքում կրկին ի հայտ եկած թերությունները, և հիմք ընդունելով «Շին Կոնտրոլ» ՍՊԸ-ի («Շին Կոնտրոլ» ՍՊԸ-ն հանդիսանում է սույն գնման ընթացակարգով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն մատուցող ընկերությունը) կողմից ստացված տեղեկատվությունը՝ մասնավորապես այն հանգամանքը, որ աշխատանքները ընթանում են դանդաղ, Մեծամորի համայնքապետարանի կողմից հուլիսի 31-ին հերթական դիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ շինարարական հրապարակում աշխատակիցներ գրեթե չկան, ներկա են եղել միայն աշխատանքների ղեկավարը և պահակը: Սույն թվականի օգոստոսի 9-ին, 13-ին հերթական դիտարկման ժամանակ պարզ է դարձել, որ շինարարական հրապարակում աշխատակիցներ չկային, իսկ օգոստոսի 14-ին տեղում է եղել միայն պահակը, օգոստոսի 15-ին կրկին Մեծամորի համայնքապետարանի կողմից կատարվել է այց, որի արդյունքում պարզ է դարձել, որ

շինարարարկան հրապարակում եղել են միայն պահակը և մեկ աշխատակից, սակայն օգոստոսի 16-ին, 19-ին, 20-ին, 21-ին, 22-ին, 23-ին, 26-ին, 27-ին, 28-ին և 29-ին կատարված այցերի ժամանակ կրկին շինարարական հրապարակում աշխատակիցներ չեն եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2024 թվականի օգոստոսի 29-ին Մեծամորի համայնքապետարանը գրությամբ Ձեզ խնդրում է տալ պարզաբանում, թե ինչու շինարարական աշխատանքներ չեն իրականացնում:

Ձեր կողմից առ այսօր արձագանք չի եղել, չեք փորձել կապ հաստատել Մեծամորի համայնքապետարանի հետ և չեք շտկել ի հայտ եկած թերությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պայմանագրի 3.4.9 կետով սահմանված է, որ «Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր՝ եթե նախագծանախահաշվային փաստաթղթերով այլ ժամկետ սահմանված չէ: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:», իսկ Ձեր կողմից չի ապահովում նշյալ կետով սահմանված պահանջի իրականացումը, տեղեկացնում ենք, որ Մեծամորի համայնքապետարանը 09.09.2024թ-ից կնքված Պայմանագիրը միակողմանի լուծել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը, անհրաժեշտ է Պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից ներկայացված, պայմանագրի կատարման ապահովումներ մասնավորապես՝ Երաշխիք Թիվ 22 55 40 987687/8 տրված՝ 10.03.2023թ. (9,695,000.00 (ինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար) և Երաշխիք Թիվ 22 55 40 987687/10 տրված՝ 13.10.2023թ. (18.10.2023թ. կատարվել է թիվ 1 փոփոխություն) 22,619,000.00 (քսաներկու միլիոն վեց հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովումից՝ Երաշխիք Թիվ 22 55 40 987687/9 տրված՝ 13.10.2023թ. (18.10.2023թ. կատարվել է թիվ 1 փոփոխություն) 26,932,851.00 (քսանվեց միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամի չափով գումարների սահմանված կարգով գանձումը և փոխանցումը հաշվեհամարին փոխանցելու միջոցով 900335239373 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ Մեծամորի համայնքապետարանը դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան
+37498393676